970 Հոգիս ծարավ է Քեզ, Հիսուս, քաղցր խոսքերիդ,

1. Հոգիս ծարավ է Քեզ, Հիսուս, քաղցր խոսքերիդ,
Պապակ հողի նման, իմ հույս, անուշ նայվածքիդ,
Հենց հնչում է իմ ականջին Քո անունն հեռվից,
Իսկույն արևն է փայլում ինձ մութ ամպի տակից:

2. Աղվեսները որջեր ունեն, թռչունները՝ բույն,
Այս աշխարհում ես տեղ չունեմ գլուխս դնելու,
Բայց տուն ունեմ ես երկնքում, Տեր Հիսուս, Քեզ մոտ,
Հոգնել եմ, Տեր, առաջնորդիր խոտավետ արոտ:

3. Վերև՝ դեպ երկինք է կանչում անհուն սերդ ինձ,
Սուրբ արյամբդ ես լվանում ինձ իմ մեղքերից,
Բայց փշոտ է երկնի ճամփան, տառապանքներով,
Օգնիր, Տեր, քայլեմ միայն ես Քո հետքերով:

4. Հառաչելուց ես հոգնել եմ, բժշկիր ինձ, Տեր,
Ամեն գիշեր ես լացում եմ, ինձ դարձիր, իմ Տեր,
Մահվան մեջ Քեզ հիշատակել, ո՛վ Հիսուս, չկա,
Գերեզմանում Քեզնից, իմ Տեր, ո՞վ պիտ գոհանա: